«ՕԼԻՎԵՐ ԱՆԴԵՐՍՈՆՆ ԸՆԴԴԵՄ ԻՆԳԼԻՍԻԱՅԻ»

ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

1. Դիմումատուն՝ պարոն Օլիվեր Անդերսոնը, ազգությամբ ֆլամբացի և ինգլիսացի է, ծնվել է 1975 թվականին և ապրում է Օտրաքսում՝ Ֆլամբիայի մայրաքաղաքում: Նա հայտնի լրագրող է ՖԳՏՎ-ում՝ Ֆլամբիայի ամենաազդեցիկ լրատվական հեռուստաալիքներից մեկում, որը լայն տարածում ունի նաև Ինգլիսիայում՝ պայմանավորված այն հանգամանքով, որ միասնական մշակութային ժառանգությունը և նույն լեզուն ապահովում է հասանելիություն նաև ֆլամբական մեդիային:

2. Երկու երկրներն էլ անդամակցել են Եվրոպայի խորհրդին և վավերացրել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան 1998 թվականին: Երկրները վավերացրել են նաև կոնվենցիային կից բոլոր արձանագրությունները:

3. Պետություններն ունեն բարիդրացիական հարաբերություններ և նրանց միջև համանմանությունները նպաստում են մի շարք ոլորտներում (այդ թվում՝ մշակույթ, կրթություն, սոցիալական կյանք) համագործակցության: Ֆլամբիայի բնակչությունը միատարր է, մինչդեռ Ինգլիսիայի բնակչության 25 տոկոսը կազմում է Անդելս ազգային փոքրամասնությունը: Երկարատև քաղաքական գործընթացների և պաշտպանության լայն երաշխիքներ ապահովող իրավական կարգավորումների շնորհիվ Անդելս ազգային փոքրամասնությունը լիովին ինտեգրված է Ինգլիսիայի հասարակական կյանքին, այնինչ Ֆլամբիայում գերիշխում է հակաանդելսական տրամադրվածությունը՝ անդելսների և ֆլամբացիների միջև պատմական անցյալում եղած բախումներով պայմանավորված: Ինգլիսիայում նման տրամադրվածության արտահայտումը ցանկացած եղանակով արգելված է, հատկապես ատելության խոսքը արգելող խիստ օրենսդրական կարգավորումներով:

4. Դիմումատուն ունի անձնական բլոգ Lifejournal բլոգային հարթակում (Lifejournal/oliver.anderson), որտեղ նա տեղադրում է իր մեկնաբանությունները և հոդվածները՝ հիմնվելով ամենատարբեր աղբյուրներից հավաքված նյութերի վրա և ընդգրկելով ամենատարբեր թեմաները՝ ներառյալ քաղաքականություն, լուրեր, հայտնի

մարդիկ: Մեդիա դաշտում շատ հաճախ հղումներ են կատարվում բլոգի գրառումներին՝ հաշվի առնելով բլոգի տարածվածությունը և այն հանգամանքը, որ վերջինս ունի բազմաթիվ ընթերցողներ և' Ֆլամբիայից, և' Ինգլիսիայից:

5. Լինելով խոսքի ազատության իսկական ջատագով՝ դիմումատուն իր ընթերցողների համար հնարավորություն էր ապահովել ազատորեն արտահայտել կարծիքն իր տեղադրած նյութերի վերաբերյալ: Դիմումատուն իր բլոգում ընդգրկել էր բլոգի մանիֆեստը, որտեղ հստակորեն նշել էր հետևյալ նախազգուշացումը.

«Ես հավատում եմ խոսքի ազատությանը: Եթե դուք տխմար, անմիտ և պոպուլիստ եք, դա ձեր գործն է, և դուք եք պատասխանատու դրա համար: Ամենայն պատասխանատվությամբ հայտարարում եմ, որ բլոգում տեղադրված ոչ մի մեկնաբանություն իմ կողմից չի ենթարկվելու որևիցե գրաքննության՝ անկախ այն հանգամանքից համաձայն կլինեմ դրանց հետ, թե ոչ:

Հ.Գ. Եթե ձեզ համար բլոգում գրված մեկնաբանություններն ընդունելի չեն, կարող եք կամ անտեսել, կամ ներկայացնել հիմնավոր պատասխաններ»:

6. Դիմումատուն ունի նաև անձնական հաշիվ Ֆայնդբուք սոցիալական կայքում, որը հասանելի է միայն իր ընկերներին՝ մեծ մասամբ լրագրողներ և ընտանիքի անդամներ: Գրառումներ կատարելիս նա օգտագործում է կեղծանուն, իսկ կատարված գրառումները հասանելի են միայն իր ընկերներին: Նույն օգտահաշվով նա նաև Ֆայնդբուք կայքում «ԻնգլիՖլամբ Մեդիա» լրագրողների խմբի անդամ է, որտեղ լրագրողները փոխանակում են տեղեկատվություն իրենց գործունեության վերաբերյալ: Նախատեսված լինելով ֆլամբացի և ինգլիսացի լրագրողների համար՝ խումբն ունի սահմանափակ հասանելիության:

7. 2018 թվականի մարտի 20-ին դիմումատուն իր բլոգում հրապարակեց հոդված Գրեգ Վ.-ի՝ ինգլիսացի հայտնի բասկետբոլիստի և թմրամիջոցների շրջանառության ու թրաֆիքինգի մեջ ներգրավված որոշ անձնաց միջև ենթադրյալ կապի վերաբերյալ: Հոդվածում նշվում էր, որ Գրեգ Վ.-ն վերջիններիս հետ մասնակցել է Ինգլիսիայի

մայրաքաղաք Ինգլիպոլի ակումբներում կազմակերպված խնջույքներին: Հոդվածը հասարակության շրջանակներում բարձրացրեց խոսակցությունների մի մեծ ալիք նշված խնջույքներին անչափահասների մասնակցության և վերջիններիս ներկայությամբ թմրանյութերի օգտագործման մասին: Հոդվածը դիմումատուի կողմից հրապարակվել էր ֆլամբյան բասկետբոլի ազգային թիմի մարզչի հայտարարությունների լույսի ներքո: Վերջին շրջանում ֆլամբյան բասկետբոլի ազգային թիմի մարզիչն անթաքույց կերպով արտահայտում էր իր հետաքրքրվածությունը Գրեգ Վ.-ի՝ Ֆլամբիայի քաղաքացիություն ձեռք բերելու հնարավորության առնչությամբ, որի արդյունքում նա կկարողանա խաղալ երկրի ազգային թիմի կազմում: Գրեգ Վ.-ն մեծ ներուժ ունեցող խաղացող էր համարվում, ով, չնայած միջազգային կարիերա ունենալու խոստումներին, երբեք չէր հրավիրվել ինգլիսյան ազգային թիմ Ինգլիսիայի բասկետբոլի ազգային ֆեդերացիայի հետ ունեցած ակնհայտ անհամաձայնությունների պատճառով: Դիմումատուի համար նշված հոդվածի շրջանակներում քննարկվող թեմայի ընտրությունը պայմանավորված էր ֆլամբյան ազգային թիմը նման անհատականությամբ համալրելու հավանականությամբ: Տևական ժամանակ Գրեգ Վ-ի մուտքը ինգլիսյան բասկետբոլի ազգային թիմ ձախողվում էր բասկետբոլային հեղինակությունների հետ իր ունեցած հարաբերությունների, հասարակությունում իր սոցիալական կյանքի վերաբերյալ հակասական կարծիքների և շահութաբեր կոմերցիոն պայմանագրերի նկատմամբ իր չբացահայտված հետաքրքրվածության պատճառով:

8. Ընթերցողների կողմից մի քանի մեկնաբանություններ ավելացվեցին բլոգի հրապարկմանը՝ ճշգրիտ հղում անելով փաստին, որ Գրեգ Վ.-ը Անդելս է ՝ Ինգլիսիայի ազգային փոքրամասնության անդամ: Վերջիններս այսկերպ արտահայտում էին ակնհայտ անհամաձայնություն Գրեգ Վ.-ի կողմից Ֆլամբիայի ազգային հավաքականի կազմում խաղալու կամ Ֆլամբիայի քաղաքացիություն ձեռք բերելու առնչությամբ: Մեկնաբանությունների մի հատված արտահայտվում էր այսպես.

> “Ban_theAndels: *Եթե Վ-ն ինչ որ մի օր միանա Ֆլամբիայի թիմին մենք այնպես կանենք, որ նրա վերջը վատ լինի: Մենք չենք թույլ տալու, որ Անդելսն ունենա*

Ֆլամբիայի քաղաքացիություն: Եթե մի օր նա միանա թիմին և ստանա քաղաքացիություն, ապա խոստանում եմ, որ արյուն կթափվի և ես դա կապացուցեմ իմ գործողություններով: Սա իսկական ճակատամարտ է և բոլորը պետք է միանան հայրենիքը փրկելու գաղափարի շուրջ:

Ben_Bro_791*: Ես կմիանամ: Բոլորս պետք է մեր հստակ ոչ-ն ասենք Անդելսներին:*

Son_of_Flambia*: Ես նույնպես միանում եմ: Նրանք բոլորը պետք է մահանան:*

Andels_bone_crusher*: Մենք պետք է արգելենք, որ Անդելսները գան մեր հայրենիք:*

Poulard_Crisp: *Այս ամենը սուտ խոսակցություններ են, ոչ մի փաստ չկա, որ հավատամ այս անհեթեթությանը: @Ban_theAndels, @Ben_Bro_791, @Son_of_Flambia տղաներ, դուք հիմար եք:*

Ban_theAndels: *@Poulard_Crisp Դու չես կարող մեզ թելադրել, թե մենք ինչ պետք է անենք: Եթե դու պաշտպանում ես Անդելսներին, ուրեմն դու էլ ես մեր թշնամին և ոչ մի տեղ չունես մեր հայրենիքում: Խորհուրդ կտամ չջղայնացնել մեզ, թե չէ շատ ավելի վատ կլինի բոլորիդ համար:*

Ben_Bro_791: *Միանում եմ արյունով նրանց հեռացնելու գաղափարին: Եթե նրանք չեն ուզում իրենց կամքով հեռանան, ապա մենք արյունով կստիպենք:*

Andels_bone_crusher: *Ով պաշտպանում է Անդելսին, նա մեր թշնամին է: Համաձայնում եմ @Ban_theAndels-ի հետ:*

Son_of_Flambia: *@Poulard_Crisp Դու պետք է հեռանաս մեր հայրենիքից, դավաճան: Անդելսների վերջը տալու ենք:*

9. Այս մեկնաբանություններին հետևելով՝ Ինգլիսիայի Անդելս համայնքի անդամները նախաձեռնեցին բողոքի ցույցեր Ինգլիպոլում Ֆլամբիայի դեսպանատան առջև՝ մեղադրելով Ֆլամբիայի իշխանություններին ի պատասխան հակաանդելսական պրոպագանդայի անգործություն դրսևորելու համար: Ցուցարարների պահանջներից էր

նաև գործուն մեխանիզմներով հակաանդելսական ատելության խոսքի անպատժելիությանը վերջ դնելը: Բողոքի ցույցերի ընթացքում տեղի ունեցող բախումների ժամանակ բռնություն էր գործադրվում Ինգլիսիայում բնակվող ֆլամբացիների խմբերի նկատմամբ՝ առաջ բերելով ինգլիսյան ոստիկանական ուժերի միջամտության անհրաժեշտությունը՝ հասարակական կարգը պահպանելու նպատակով: Արդյունքում ինգլիսյան և ֆլամբյան հավաքականների միջև պլանավորված բասկետբոլային հանդիպումը հետաձգվեց աջակիցների միջև լարվածությունը թուլացնելու և հավանական բախումներից խուսափելու նպատակով:

10. Համաձայն իր ընթերցողների մեկնաբանությունները չգրաքննելու սկզբունքային հայտարարության՝ դիմումատուն Lifejournal հարթակից չէր ջնջել վերոնշյալ հոդվածի վերաբերյալ գրված մեկնաբանություններից ոչ մեկը: Ավելին, դիմումատուն իր բլոգում արված գրառման հղումը տարածեց նաև Ֆայնդբուք կայքի իր անձնական էջում, «ԻնգլիՖլամբ Մեդիա» լրագրողների խմբում:

ա) Քաղաքացիական դատավարությունն ընդդեմ դիմումատուի

11. Գրեգ Վ-ն, տեղեկանալով այն մասին, որ Դիմումատուն Lifejournal կայքում իր վերաբերյալ գրառում է կատարել, հայց է ներկայացնում դիմումատուի դեմ Ինգլիպոլի քաղաքացիական դատարան՝ պահանջելով վնասի հատուցում, վիրավորական հոդվածի ջնջում և ներողության հրապարակում:

12. Նա պնդում էր, որ հոդվածը զրպարտող է և մեղադրանքները՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության և մարմնավաճառության հետ կապված լինելու վերաբերյալ պատճառ են հանդիսացել մի քանի հրապարակային պայմանագրերի չեղարկման և Luckyball բասկետբոլային ակումբում (որտեղ ինքը խաղում է) համագործակցության կասեցման վտանգի առաջացման համար: Նա նաև նշել էր, որ հետևելով այդ նորությանը, նրա հարսնացուն չեղարկել էր իրենց նշանադրությունը և լքել իրեն:

13. 2018 թվականի դեկտեմբերի 25-ին Ինգլիպոլի քաղաքացիական դատարանը, հիմք ընդունելով Ինգլիսիայի Վճռաբեկ դատարանի կողմից խոսքի ազատության՝ որպես մարդու հիմանարար իրավունքներից մեկի սահմանափակման իրավաչափության վերաբերյալ մեկնաբանությունները, բավարարեց պարոն Գրեգ Վ-ի հայցը և պարտավորեցրեց դիմումատուին վճարել վնասները, հեռացնել գրառումը և հրապարակել ներողություն թմրանյութերի և մարմնավաճառության մեջ ներգրավվածության վերաբերյալ չհաստատված ենթադրությունների տարածման համար՝ հատկապես հաշվի առնելով այն ազդեցությունը, որ այդ գրառումը ունեցել էր բասկետբոլիստի անձնական և ընտանեկան կյանքի վրա: Դատարանը նշել էր, որ երկու կողմերի իրավունքների միջև հավասարակշռություն հաստատելու համար, առաջնություն է տրվել բասկետբոլիստի անձնական և ընտանեկան կյանքի հարգանքի իրավունքին, ինչը խաթարվել էր այնպիսի եղանակով, որն արդարացված չէր լուրերի հանրային հետաքրքրության արժեքով: Վնասի չափը գնահատելիս հաշվի էին առել նաև բասկետբոլիստի կայուն եկամուտների կորուստը ՝որպես առևտրային պայմանագրերի չեղարկման արդյունք:

14. Դիմումատուն բողոքարկել էր վճիռը՝ վիճարկելով Ինգլիսիայի դատարանների իրավասությունը պարտավորեցնելու իրեն ջնջել այն գրառումը, որը հրապարկվել էր մեկ այլ պետության տարածքից՝ Ֆլամբիայից, օտարերկրյա սերվերի կողմից սպասարկվող կայքէջի պլատֆորմի վրա և այդպիսով որևէ առնչություն չունենալով Ինգլիսիայի հետ: Վերաքննիչ դատարանը մերժեց դիմումատուի բողոքը և հաստատեց առաջին ատյանի վճիռը, որն այսպիսով 2019 թվականի փետրվարի 25-ին վերջնական դարձավ:

15. Դիմումատուն հրաժարվեց ջնջել գրառումը: Նա հրապարակեց ներողության հայտարարություն դատարանի կողմից սահմանված պայմաններին համապատասխան՝ հաշվի առնելով դրա մատչելիությունը և փոխհատուցող ազդեցությունը Ինգլիսիայում:

16. Գրեգ Վ.-ի դիմումի հիման վրա հարուցվեց կատարողական վարույթ՝ վերը նշված և չիրականացված պահանջների կապակցությամբ: Արդյունքում 2019 թվականի մարտի

30-ի որոշմամբ Ինգլիպոլի դատարանը հանձնարարեց դիմումատուին վճարել տուգանք վերջնական վճռի՝ վիճարկվող գրառումը ջնջելու պահանջը չկատարելու յուրաքանչյուր օրվա համար:

ա) Քրեական դատավարություն ընդդեմ դիմումատուի

17. 2018 թվականի նոյեմբերի 15-ին Ինգլիսիայի գլխավոր դատախազությունում դիմումատուի դեմ հարուցվեց քրեական գործ ատելության խոսքի հատկանիշներով: Համաձայն Ինգլիսիայի քրեական օրենսգրքի իրավակարգավորումների՝ յուրաքանչյուրոք ոք, ով արտահայտման ցանկացած վիրավորական եղանակով սադրում է ատելություն կամ թշնամություն կախված ռասսայական կամ գենդերային պատկանելությունից, կրոնից, սոցիալական դիրքից կամ տարածաշրջանային տարբերություններից այնպես, որ վտանգում է հասարակական անվտանգությունը, դատապարտվում է ազատազրկման վեց ամսից երեք տարի ժամկետով:

18. Դիմումատուն մեղադրվում էր ատելության խոսք պարունակող մեկնաբանությունների հրապարակումն իր բլոգում թույլատրելու և այդպիսով արված հայտարարությունները ենթադրաբար հաստատելու համար: Գործի քննության դատական փուլի ընթացքում դատախազը միջնորդեց արգելափակել դիմումատուի բլոգում հրապարակված գրառումը և վերջինիս հետագա հղումները, ներառյալ գրառման հղումը Ֆայնդբուք սոցիալական կայքի դիմումատուի անձնական հաշվում և «ԻնգլիՖլամբ Մեդիա» լրագրողների խմբում: Դատարանը, բավարարելով միջնորդությունը, համապատասխան կարգադրությունն ուղարկեց Ինգլիսիայի հեռահաղորդակցության կոմիտեի կատարմանը:

19. Կոմիտեն ծանուցեց դատարանին, որ անհատական գրառումները չեն կարող արգելափակվել: Կարգադրությունը պետք է սահմանի դիմումատուի անձնական բլոգի ընդհանուր արգելափակման և Ֆայնդբուք սոցիալական կայքում դիմումատուի անձնական հաշվի (ներառյալ «ԻնգլիՖլամբ Մեդիա» լրագրողների խմբի)

արգելափակում: Դատարանը վերահաստատեց Կոմիտեի ծանուցման բովանդակությունը:

20. Որոշ ֆլամբացի և ինգլիսացի լրագրողներ դիմեցին դատարան՝ դատավարությանը մասնակից դարձվելու պահանջով այն հիմնավորմամբ, որ դատարանի վերջնական դատական ակտի համաձայն Ֆայնդբուք սոցիալական ցանցում «ԻնգլիՖլամբ Մեդիա» լրագրողների խմբի արգելափակումն ուղղակի ազդեցություն է ունենալու նաև վերջիններիս գործունեության վրա: Վերջիններիս պահանջը մերժվեց:

21. Դիմումատուն բողոքարկեց դատական ակտը վերաքննության կարգով: Վերքաննիչ ատյանը 2019 թվականի մարտի 25-ին մերժեց բողոքը: Դատական ակտի պահանջները կատարվեցին. Դիմումատուի մուտքի իրավունքն իր անձնական բլոգ արգելափակվեց միայն Ինգլիսիայում, մինչդեռ Ֆայնդբուք սոցիալական կայքում իր անհատական հաշիվը և «ԻնգլիՖլամբ Մեդիա» լրագրողների խումբն արգելափակվեցին ամբողջությամբ՝ Ֆայնդբուք սոցիալական կայքին ուղղված Կոմիտեի հայտի հիման վրա:

22. 2019 թվականի սեպտեմբերի 26-ին դիմումատուի փաստաբանը դիմեց Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ խնդրելով արձանագրել պարոն Օլիվեր Անդերսոնի իրավունքների և կոնվենցիրոն ազատությունների խախտումը: